- շուկան դանդաղ է շարժվում դեպի հավասարակշռությունը և կիրառելի են կայունության, գործընթացային, կոնյունկտուրային, կառուցվածքային, արտաքին տնտեսական քաղաքականությունները,
2. շուկայի գործունեության արդյունքները ցանկալիից հեռու են (բաշխման քաղաքականություն, սոցիալական քաղաքականություն):

Մեր կարծիքով, արդյունավետ տնտեսական քաղաքականությունը պետք է պարզ և առանց հակասությունների հստակեցնի ընդհանուր հայեցակարգի շրջանակներում իր նպատակներն ու հիմնական կանոնները և ցանկացած միջոցը կողմնորոշի դեպի դրված նպատակների իրականացումը՝ հաշվի առնելով տարաբնույթ պայմանների արդյունքում նպատակների վրա ազդող գործոններն ու գործիքները: Վերջինս էլ հիմնավորվում է տնտեսական քաղաքականության ռազմավարական կառավարման փիլիսոփայությունը:

ԱՐՏԱՎԱԶԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.թ, դոցենտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ

Շուրջ երկու տասնամյակ է, ինչ ակտիվ քննարկումներ են ընթանում Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության, դրա ուղղվածության, նպատակների և կիրառվող գործիքակազմի վերաբերյալ: Ու թեև 2003-2004 թվականներից սկսած առավել մեծ ուշադրություն է հատկացվում բարեփոխումների սոցիալական տեսանկյուն ենթադրող հարցերին, այնուամենայնիվ, ընդհանուր համատեքստից դուրս է մնում գլխավոր նպատակը՝ հասարակության բարեկեցության բարելավումը:

Սմիթի, Ռիկարդոյի, Մարքսի, Վեբերի, Օյկենի, Հայեկի և այլ տնտեսագետների հայեցության մեջ ժողովրդի բարեկեցությունը հոմանիշ է «ընդհանուր բարեկեցություն» հասկացությանը: Այն իր մեջ պարունակել է տարբեր ենթատեքստեր, ընդ որում, առավել փոխկապակցված տնտեսական ազատության հետ:

Ինչպես Ադամ Սմիթի «անտեսանելի ձեռքը», այնպես էլ Վալտեր Օյկենի և Ֆրիդրիխ Հայեկի աշխատություններում նկատելի են տնտեսական ազատության ինստիտուցիոնալ կարգավորման գաղափարները:

Հետռիկարդյան աշխատություններում և հատկապես Կարլ Մարքսի մոտ շեշտվում են բարեկեցության մեկ այլ բաղադրամաս՝ արդարությունն ու հավասարությունը:

Ավելի ուշ, Վիլֆրեդո Պարետոն հասարակական և տնտեսաքաղաքական նպատակների հստակեցման ժամանակ ուշադրություն է հրավիրում մրցակցային հարաբերությունների ազատության գաղափարախոսության վրա:

Արդի տնտեսագիտական միտքը հիմնավորում և խմբավորում է բարեկեցության հասնելու, դրանից բխող նպատակների կողմնորոշվածությունը և պարտադրված համաձայնեցումը դեպի հասարակության հիմնարար արժեքները՝ խաղաղությունը, ազատությունը, ընդհանուր հավասարությունը, անվտանգությունը, ապահովությունը և առաջընթացը[1]:

Հետաքրքրական է Պետերսի «բուրգը», որը հստակեցնում և իրատեսորեն ներկայացնում է տնտեսական քաղաքականության հիմնական, օժանդակ, ենթահամակարգային նպատակները որոշակի հարթություններում և որպես վերջնական նպատակ՝ դասակարգում հասարակության բարեկեցությունը (տես գծապատկեր 1)[2]:

Նույնը շեշտադրում են Դոնգեսը և Ֆրեյթագը՝ բարեկեցությունը դիտելով որպես նպատակների հիերարխիայի ամբողջացում[3]:

Տնտեսաքաղաքական գործիչների պատկերացումներն այն մասին, թե ինչն է քաղաքական տեսանկյունից ցանկալի կամ ինչ չափով այն պետք է լինի, սովորաբար տարբեր են:

Կախված կուսակցական-քաղաքական գունապնակից և կառավարության կազմից՝ այս կամ այն տնտեսաքաղաքական նպատակը, օրինակ տնտեսության աճը կամ կայունությունը, դիտվում է որպես առաջնահերթ: Նպատակների հիերարխիայի գոյության պատճառով միշտ չէ, որ հաջողվում է ստույգ պարզաբանել, թե խոսքը նպատակի՞ մասին է վերաբերում, թե՞ միջոցի. քանի որ նպատակը կրկին կարող է դիտվել որպես միջոց՝ մեկ այլ ավելի բարձր նպատակի համար: Այսպես, տնտեսական քաղաքականության մաս կազմող համարյա թե յուրաքանչյուր նպատակ կարող է դիտարկվել որպես **նպատակների շղթայի մի օղակ**: Հաշվի

---

[1] Տես. Eucken W. Grundsatze der Wirtschaftspolitik. Tubingen. 1968., Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Wisbaden, 1961. Hermann A.,Wirtschaftspolitik und Regierungssystem der Bundesrepublik Deutschland: eine Einführung:- Opladen: Leske + Budrich, 1995. Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. Peters Hans-Rudolf. Wirtschaftspolitik: Munchen, Wien, 2000, Weimann J. Wirtschaftpolitik: Allokation und kollektiv Entscheidungen, Springer 1996. Korner H. Theoretische Grundlagen der Wirtschaftspolitik. Koeln. 1977. Kirschen E. International vergleicende Wirtschaftspolitik-Versuch eine empirische Grundlegung. berlin 1967. Dieter Nohlen, Franz Nuscheler. Handbuch der Dritten Welt Bd. 2, Bonn: Dietz. 1995. Kirchgessner G., Wirtschaftspolitische Beratung aus der Sicht des kritischen Rationalismus, Karl Popers kritischer Rationalismus, Tuebingen, 1999. Voigt S. Die konstitutionelle Ökonomik als Herausforderung für die Theotie der Wirtschaftspolitik-zugleich eine Skizze zur Weiterentwicklung einer ökonomischen Theori der Verfassung, 1996.

[2] Peters Hans-Rudolf. Wirtschaftspolitik: Munchen, Wien, 2000.

[3] Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001.

առնելով վերադաս նպատակների առկայությունը՝ մանրամասն վերլուծության դեպքում հաճախ պարզվում է, որ դրանցից որոշները միջանկյալ կամ ստորադաս նպատակներ կամ նույնիսկ միջոցներ են:



Գծապատկեր 1. Պետերսի նպատակների բուրգը

Բոլոր տնտեսաքաղաքական նպատակները, առանց բացառության, կարելի՛է կապել հասարակա-քաղաքական հիմնանպատակների հետ, որոնք, ինչպես առանձին վերցված, այնպես էլ իրենց ամբողջականության մեջ կարող են ծառայել գլխավոր՝ հասարակական բարեկեցության նպատակին: Հասարակա-քաղաքական հիմնանպատակները ուղղված են որոշակի հիմնային արժեքների, որոնք կարելի է վերածնակերպել որպես ազատություն, հավասարություն, առաջընթաց (զարգացում) և ապահովություն:

Իսկ ինչպես կարելի է մեկնաբանել բարեկեցությունն ապահովող այս արժեքները:

Ազատություն՝ նշանակում է, որ անհատներն առանց գործողության այլընտրանքների սահմանափակումների և առանց այլ մարդկանցից կամ խմբերից կախվածության՝ ըստ ցանկության՝ ազատ կարող են ձևավորել իրենց կենսական կամ աշխատանքային հարաբերությունները: Սակայն մարդկային համատեղ կյանքը և աշխատանքի բաժանման վրա հիմնված տնտեսական գործընթացները թույլ չեն տալիս, որ բոլոր բնագավառներում անհատներին ընձեռնվի լիակատար ազատություն կամ խոչընդոտներ չդրվեն անհատական ցանկությունների իրականացման ժամանակ: Ցանկությունների անսահմանափակ իրականացմանն ու գործողություններին հակադրվում են ինչպես ապրանքների սղության փաստի առկայությունը և աշխատանքի բաժանման հետևանքով կախվածության մեջ գտնվելու հարաբերությունները, այնպես էլ մյուսների ազատությունները հաշվի առնելու փաստը: Որպես կանոն, առանձին անհատի ազատությունն ավարտվում է այնտեղ, որտեղ այն սահմանափակում կամ բացառում է մյուսների ազատությունը: Ճիշտ է, ազատական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսակարգի պայմաններում իշխանության սահմանափակումներն անհրաժեշտ են (օրինակ, մրցակցության սահմանափակումների արգելման և ընկերությունների միաձուլման վերահսկման միջոցով), այնուամենայնիվ, նրանում ապրանքների առաջարկի և գործունեության այլընտրանքային հնարավորությունների բազմազանության պարագայում առանձին տնտեսական սուբյեկտների ազատության աստիճանը հարաբերականորեն մեծ է:

Հավասարություն հասկացությունը հասարակական քաղաքական իմաստով շատ ժամանակ կապվում է արդարության, արդարադատության մասին պատկերացումների հետ: Այսպես, օրինակ, օրենքի առաջ հավասարությունը դիտվում է որպես արդարացի, քանի որ այն ապահովում է նույնատիպ վերաբերմունք և բացառում է շահերի ոտնահարումները, հիմնվելով որոշակի հատկանիշների վրա (ինչպիսիք են՝ ծագումն ու սոցիալական կարգավիճակը): Ազատությունը՝ առանց կրթության և մասնագիտություն ձեռք բերելու հնարավորությունների որոշակի հավասարության, կարող է հանգեցնել հասարակական անհավասարության, որը հակասում է արդարության վերաբերյալ այսօրվա պատկերացումներին: Աշխատանքային արդարությունը պահանջում է նույնանման աշխատավարձ միևնույն աշխատանքի դիմաց: Թե աշխատանքի դիմաց աշխատավարձերի տարբերակումը որքանով է ծառայում «սոցիալական արդարությանը», մնում է վիճելի՝ կախված նպատակների սահմանումներից և ազդեցություններից: Եթե ընտանիքի հայրը երեխաների համար բացի իր աշխատավարձից ստանում է հավելավճար, ապա դա կարելի է վերագրել ավելի շուտ սոցիալական արդարությանը, կարծես թե տեղի է ունենում լոկ աշխատավարձի լրացում, ինչը ծույլին միևնույն չափով աշխատավարձ է ընծայում, ինչքան որ ջանասերին:

Առաջընթացը (զարգացումը) կարող է նշանակել ինչպես մերձեցումը առաջադրված նպատակներին, այնպես էլ հիմնովին նորարարությունը (ինովացիան): Առաջընթացը հավանական տնտեսական աճի նպատակի հաղթահարման ձևով դրական ազդեցություն կունենա նրանց համար, ովքեր համախառն սոցիալական արտադրանքի ավելացումից, համապատասխանաբար (ազատությունը սահմանափակող) ապրանքների սղության կրճատումից շահույթ ունեն, դրան հակառակ՝ մյուսների վրա, ովքեր առանց իրենց կողմից գնողունակության բարելավման, զարգացումով պայմանավորված շրջակա միջավայրի պատճառած վնասներից տուժել են, բացասական ազդեցություններ կունենան: Նորարարությունը, որպես տեխնիկական առաջընթացի հետևանք, մի կողմից կարող է բարձրացնել եկամուտներն ու աշխատանքի արտադրողականությունը, մյուս կողմից, սակայն, նաև կարող է հանգեցնել կառուցվածքային գործազրկության:

Ապահովությունը կարող է կապված լինել ինչպես դրական հանգամանքների՝ կայունության, այնպես էլ վատ հարաբերությունները դեպի դրականի փոփոխության հետ: Այսպես, օրինակ, ձեռնարկության գոյության ու աշխատատեղերի պահպանումը միշտ կախված են եղել շահութաբերության ապահովումից և ապրանքի շարունակական իրացումից, ինչը, որպես կանոն, պայմանավորված է ապրանքների մշտապես բարելավման, ծախսերի նվազեցման, ինչպես նաև, արտադրության կազմակերպման և իրացման ռազմավարությունների փոփոխման հետ: Սոցիալական ապահովությունն իր մեջ առաջնահերթ ներառում է արտադրական և կյանքի ռիսկերի ծածկումը ապահովագրության կողմից, որոնք կարող են ի հայտ գալ հիվանդության, հաշմանդամության, տարիքի և գործազրկության միջոցով: Արժույթի ապահովությունն արտահայտվում է դրամի ներքին և արտաքին փոխարժեքի կայունության տեսքով: Դրամի ներքին փոխարժեքն արտացոլում է դրամի գնողունակությունը ներքին շուկայում, ընդ որում, այն փոխադարձ հարաբերության մեջ է գտնվում գների մակարդակի հետ (գների աճող մակարդակը = դրամի նվազող փոխարժեքին, գների նվազող մակարդակը = դրամի աճող փոխարժեքին): Ի տարբերություն՝ արտաքին փոխարժեքը ցույց է տալիս ներքին դրամական միավորի գնողունակությունն արտաքին շուկայում, ինչը համապատասխանաբար տարադրամի փոխարժեքի հետ միասին փոփոխվում է:

Տարբեր գիտնականներ այս հիմնարար արժեքներին ավելացնում են այնպիսի ենթատարրեր, ինչպիսիք են՝ արդյունավետ հասարակության ձևավորումը, ժողովրդավարությունը, քաղաքացիական ազատություններն ու մարդկանց քաղաքական իրավունքների ապահովումը, սուբյեկտիվ հավասարությունը և հասարակության այլ խավերի համապատասխան կենսամակարդակի բարձրացումը[1]:

Իսկ ինչումն է կայանում բարեկեցության նպատակի հիմնախնդիրը: Ըստ մեզ՝ դա շահերի համատեղելիությունն ու բախումներն են:

Շահերը պատկանում են մարդկային գիտակցության արխետիպերին և կյանքի ձևավորման տիպերին: Մարդիկ կենսագործունեության տարբեր ասպարեզներում, ինչպիսիք են աշխատանքը, ազատ ժամանակը, հասարակությունը, քաղաքականությունը, ձգտում են ի կատար ածել իրենց սեփական կամ մի խմբի շահերը: Հասարակության համատեղ կյանքի ընթացքում անհատների և խմբերի շահերը բախվում են միմյանց, ընդ

[1] Ramb B-T.,Grundlagen der Wirtschaftspolitik., Munchen., 1987. s.32-41.

որում, այնպես չի լինում, որ որոշ անհատներ չփորձեն իրենց շահերը ի կատար ածել ի վնաս մյուսների կամ հասարակության բոլոր անդամների համընդհանուր շահերի՝ այսինքն՝ ի վնաս հասարակական բարօրության: Սակայն չի կարելի պնդել, որ անհատական շահերի հետապնդումը էթիկայի տեսանկյունից սկզբունքայնորեն անընդունելի է, և այդ պատճառով էլ կտրականապես պետք է դրա դեմն առնել:

Ադամ Սմիթը նկատում է. սեփական շահերի հետապնդումից ժողովրդի բարեկեցությանն ու հասարակական բարօրությանը ոչ մի վտանգ չի կարող սպառնալ: Չնայած շուկայական տնտեսության մեջ յուրաքանչյուր անհատ առաջնահերթ իր սեփական շահերն է տեսնում և ձգտում անձնական օգուտի ավելացմանը, սակայն հենց այդ պահվածքն էլ պայմանավորում է արդյունավետ տնտեսական գործունեությունը ու ակամա և աննկատ, կարծես «ղեկավարվելով անտեսանելի ձեռքով», միաժամանակ նպաստում է հասարակության բարեկեցության բարձրացմանը:

Մի կողմից անհատական, համապատասխանաբար խմբային շահերի և մյուս կողմից համընդհանուր շահերի, հետևաբար հասարակական բարօրության միջև հնարավոր բախումը կարելի է լուծել միայն այն ժամանակ, եթե հաջողվում է անհատների և խմբերի շահերն օգտագործել արտադրողականության բարձրացման նպատակով՝ առանց վնասելու մյուսների շահերը:

Քանի որ մինչ այժմ հասարակական բարօրության բովանդակային սահմանումների հիմնախնդիրը ուշադրությունից դուրս էր մնում, անհրաժեշտ է պարզաբանել նաև դրա կոնկրետացման վերաբերյալ զանազան սահմանումներն ու տնտեսաքաղաքական պրակտիկայի մեջ օպերատիվ կիրառության հնարավորությունները:

Համընդհանուր բարօրություն հասկացության շաղկապումը արժեքների որոշակի կատեգորիաների հետ, օրինակ, ինչպիսիք են անհատական ազատության պաշտպանությունը կամ սոցիալական արդարության հաստատումը, քաղաքականության համար դեռևս չի ստեղծում օպերատիվ կողմնորոշման մեծություն, քանի որ տեսակետներն այն բանի վերաբերյալ, թե ինչ է իր մեջ ներառում անհատական ազատությունը և ինչ է նշանակում սոցիալական արդարություն, կարող են առավելագույնս տարբեր լինել: Նույնիսկ տնտեսական նպատակի դրույթի դեպքում հասարակական բարօրության վերաբերյալ կարող են լինել բազմազան տեսակետներ, քանի որ համընդհանուր տնտեսական նպատակներն ու նպատակների սեկտորային փաթեթը, որոնք կարելի է միացնել հասարակական բարօրությանը, ամբողջովին միշտ կապակցված են նպատակների դասակարգման հերթականության վերաբերյալ գնահատականների հետ և մեծ մասամբ որոշվում են հասարակական քաղաքական խմբերի շահերի կողմից: Այսպես, օրինակ, կախարդական քառանկյան (գների մակարդակի կայունությունը, լիակատար զբաղվածությունը, տնտեսության աճը և արտաքին տնտեսական հավասարակշռությունը) համընդհանուր տնտեսական նպատակները կարող են համարվել որպես հասարակական բարօրությանն ուղղված նպատակներ, սակայն նրանց դասակարգման հերթականությունը էականորեն կախված է տվյալ կառավարության գնահատականից:

Սովորաբար բարեկեցությունը ծագում է երկու նախապայմաններից, նախ՝ որ այն կախված է հասարակության բոլոր անդամների անհատական բարեկեցությունից (անհատապաշտական դրույթ) և ապա՝ որ անհատներն իրենք կարող են որոշել, թե արդյոք իրենց տնտեսական իրավիճակի փոփոխություններն իրենց կողմից դիտվում են որպես բարեկեցությունը բարձրացնող (ինքնորոշման չափանիշ): Դրանք միմյանց հետ սերտ կապված են, սակայն նույնանման չեն:

Ինչպես նկատում է Պետերսը. բարեկեցության նախկին տեսությունը ենթադրում է, որ անհատական բարեկեցությունը օգուտից է բխում, իսկ օգուտը հիմնականում չափելի և միջանձնային տեսանկյունից համեմատելի է[1]: Ուստի ելակետ ունենալով այս դիտակետը՝ հասարակության բարեկեցությունը կարելի է սահմանել որպես հասարակության անդամների անհատական բարեկեցությունների հանրագումար:

Անհատական օգուտների գումարման արդյունքում կարելի է ենթադրել, որ բոլոր անհատները, անկախ իրարից, կարող են հասնել առավելագույն օգուտի:

Միանշանակ պետք է համաձայնվել Հայկո Կյորների հետ, որը ինչպես անհատների, այնպես էլ հասարակության բարեկեցության էական թերությունը տեսնում է լոկ նյութական ապրանքների առկայությամբ որոշման մեջ[2]: Նա անհատական բարեկեցության համար վճռորոշ է դիտում ոչ միայն նյութական ապրանքների առկայությունը, իսկ հասարակական բարեկեցության համար համախառն սոցիալական արտադրանքի մեծությունն ու վերաբաշխումը, այլև կարևորում նաև բնապահպանական, ենթակառուցվածքային և սոցիալական տարրերը: Բացի այդ, ըստ մեզ, մարդկանց բարեկեցությունը կախված է նաև ոչ նյութական գործոններից, ինչպես օրինակ, տվյալ երկրի հոգևոր և մշակութային մակարդակից: Սակայն հարկ է նկատել, որ շրջակա միջավայրի, սոցիալական և մշակութային ցուցիչների ներմուծումը բարեկեցության չափման հայեցակարգի մեջ արտակարգ դժվար է:

Դա է վկայում Պարետոյի այն կանոնը, ըստ որի հասարակական բարեկեցության մակարդակի բարձրացում միայն այն դեպքում կարող է լինել, երբ գոնե մեկ տնտեսական սուբյեկտի օգուտը մեծանում է, առանց մյուսի օգուտին վնաս պատճառելու[3]:

Սակայն հասարակական և տնտեսական քաղաքականության պրակտիկայում բարեկեցության բարձրացմանն ուղղված նպատակներն ու ջանքերն առանց բաժանման ասպեկտները հաշվի առնելու, հազիվ թե կհանդուրժվեն, այնպես որ, որպես կանոն, բնակչության որոշակի շերտերի կամ անձանց որոշակի խմբերի համար ձգտում կա հասնել բարեկեցության էֆեկտների:

---

[1] Peters Hans-Rudolf. Wirtschaftspolitik: Munchen, Wien, 2000.
[2] Korner H. Theoretische Grundlagen der Wirtschaftspolitik. Koeln. 1977.
[3] http://gallery.economicus.ru.

Թե ինչքան պրոբլեմային է անհատական նախապատվությունները համատեղել նպատակների հասարակական համակարգում, ցույց է տալիս Արոուի պարադոքսը[1]:

Քանի որ հնարավոր չէ անհատական նախապատվությունների կուտ միասնություն, ապա նույնիսկ ժողովրդավարական գործիքակազմի կիրառումը չի ապահովում կեղծումներից խուսափել: Մինչ այժմ բարեկեցության տնտեսագիտությանը չի հաջողվել ստեղծել մի օպերատիվ կոլեկտիվ բարեկեցության գործառույթ: Այսպիսով, հազիվ թե հնարավոր է նաև տալ հասարակական բարեկեցության օպտիմալացմանն ուղղված նպատակների ու ուղիների իմաստալից սահմանումը:

Բացի այդ, հարց է ծագում, թե արդյոք ընդհանրապես իմաստ ունի բոլոր նպատականման տնտեսաքաղաքական ձգտումները կապել միայն մեկ, ամեն ինչ իր մեջ պարունակող տնտեսական քաղաքականության հիմնական նպատակին, ինչպիսին է ժողովրդի բարեկեցության բարձրացումը: Նման փորձը կհանգեցներ նրան, որ բոլոր ստորադաս և միջանկյալ նպատակները կդառնան հիմնական նպատակին հասնելու միջոցներ: Սակայն տնտեսաքաղաքական նպատակների բախումների հիմնախնդիրը չի կարող լուծվել այն բանի միջոցով, որ ստորադաս և միջանկյալ նպատակները դիտվում են որպես գործիքներ վերադաս նպատակին հասնելու համար: Կիրառվող տնտեսական քաղաքականությունը պարբերաբար ունենում է տարբեր տեսակի առաջադրանքներ, որոնք մեծամասամբ անհրաժեշտ է լինում լուծել միաժամանակ, այնպես որ հազիվ թե հնարավոր է զանազան խնդիրների առաջադրումները միայն մեկ, բոլոր ասպեկտներն իր մեջ պարունակող նպատակի մեջ նկարագրել: Այն մեծ մասամբ գործ ունի բազմաթիվ և հաճախ նպատակների ամբողջ փաթեթների հետ, որոնք միայն հազվադեպ կարող են բոլորը մեկ վերադաս նպատակի ուղղությամբ դասակարգվել:

Ներկայիս տնտեսական քաղաքականության վերաբերյալ հետազոտությունների ուշադրության կենտրոնում է մնում նաև այն, որ բարեկեցության ապահովումն ուղեկցվում է տնտեսության զարգացումով և, հակառակը: Վերջինս հիմնավորվում է տեխնիկական առաջընթացով, որը և նախատեսում է տվյալ ժամանակահատվածի տեխնիկական հագեցվածության պահանջներին համապատասխան մարդկային կապիտալի ձևավորում: Իր հերթին հասարակության և ցանկացած անհատի բարեկեցությունը թույլատրում է ձևավորել նորարարական գործունեության համար ինտելեկտուալ, ֆիզիկական և հոգևոր պոտենցիալ:

Այս պարագայում կարևորվում են պետության միջամտության, վերջինիս արդյունավետության գնահատման և մեթոդաբանության հարցերը: Կարծիքներն այստեղ տարբեր են:

Կարելի է համաձայնվել Ստրոուտոպի և Գվարդնիի հետ[2], որ պետությունը կարող է աջակցել հասարակության անդամների համատեղ գործունեությանը և բարձրացնել երկրի տնտեսական բարեկեցությունը երկու ճանապարհով՝ ապահովել մարդկանց կյանքի անվտանգությունը, ազատությունն ու սեփականությունը, և հատկացնել որոշ բարիքներ այն խմբերին, որոնք դժվարանում են դրանք հայթայթել շուկայի միջոցով:

Գերմանական սոցիալական-տնտեսական համակարգի հիմնադիր Լյուդվիգ Էրհարդը կարևորում է պետության միջամտության դերակատարությունը հատկապես այն պարագայում, երբ տեղի են ունենում համակարգերի, ֆորմացիաների ակտիվ փոփոխություններ[3]: Նա գտնում է, որ պետության կարևորագույն նպատակը պետք է լինի ազգաբնակչության բարեկեցության ապահովումը՝ իբրև դրա արդյունավետ միջոց համարելով մրցակցությունը: Վերջինս թույլատրում է բոլորին օգտվել տնտեսական առաջընթացից՝ հատկապես որպես սպառողներ:

«Մրցակցության միջոցով կարելի է հասնել առաջընթացի և շահույթի սոցիալիզացիայի,- շարունակում է գիտնականը,- սա իմ համոզման անբաժանելի մասն է և միայն այս ուղիով կարելի է բազմապատկել բարեկեցությունը: Բարեկեցությունը բոլորի համար և բարեկեցություն մրցակցության ճանապարհով փոխկապակցված են: Առաջինը նպատակն է, իսկ երկրորդը ուղին, որը բերում է նշված նպատակին»:

Այսպիսով, կարևորելով բարեկեցությունը որպես տնտեսական քաղաքականությունների կարևորագույն նպատակ, անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել տնտեսական և քաղաքական այն նպատակների վրա, որոնք բերում են ցանկալիին և գտնվում են փոխադարձ ներդաշնակության մեջ:

«Նպատակները քաղաքական ցանկալի վիճակի կամ իրավիճակի փոփոխության վերաբերյալ ապագա պատկերացումն է».-նկատում է Պետերսը[4]: Կամ. «Տնտեսական նպատակները որոշակի տնտեսական իրավիճակների կամ քաղաքական ցանկալի տնտեսական զարգացումների նորմավորումն է»[5]:

Պրակտիկ կամ կիրառվող տնտեսական քաղաքականության ժամանակ հանդիպում են տարբեր նպատակների կամ նպատակների խմբի: Առկա է, այսպես կոչված, նպատակների մի խումբ, որը խիստ հետաքրքրական է տնտեսական քաղաքականության կարևորագույն հարցադրումների առաջադրման առումով:

Օպերատիվ տնտեսաքաղաքական նպատակները պահանջում են հստակ սահմանված նպատակային հասկացություններ, որոնք կարող են սահմանել քաղաքական տեսանկյունից ցանկալի վիճակը, նրա պահպանման միջոցները, կամ էլ, առանձնացնել ցանկալի փոփոխության ուղղությունը և փոփոխության այն աստիճանը, որին ձգտում ենք:

Ի տարբերություն գործիքների կամ մեխանիզմների, որոնք գործընթացը հասցնում են ցանկալի նպատակի, նպատակներին բնորոշ են բովանդակայինը, արժեքայինը և ներքին գնահատականը:

Տնտեսաքաղաքական նպատակադրումները սկզբունքայնորեն հիմնվում են արժեքորումների վրա: Վերջինիս նկատմամբ նախապատվելիության հիմնախնդրից կարելի է հետևություն անել, որ այն չի կարող

---

[1] Նույն տեղում:
[2] Строуп Р.,Гвартни Д. Азбука экономики.-М., 2001. http://www.vusnet.ru/forum.
[3] Эрхард Л. Благосостояние для всех.-М., 2005. http://www.vusnet.ru/forum.
[4] Peters Hans-Rudolf. Wirtschaftspolitik: Munchen, Wien, 2000, s.82-101.
[5] Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Wisbaden, 1961.

հանդիսանալ միայն տնտեսական քաղաքականության տեսական հարցադրում: Անհրաժեշտ է խուսափել նպատակային սեփական նախապատվությունները նպատակային նորմ դարձնելուց: Սակայն սա չի նշանակում, որ տնտեսաքաղաքական նպատակները տնտեսագիտական վերլուծության առարկա չեն կարող լինել: Այսպես, համատեղելիության պարագայում նպատակի հստակ սահմանման միջոցով դրա մեկնաբանումը ինչպես նաև ստուգումը կամ նպատակային հակասությունները պատկանում են տեսական տնտեսական քաղաքականության կենտրոնական հարցադրումներին, եթե դրանք ուղղված են կիրառվող տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Կիրառվող տնտեսական քաղաքականությունը, որպես կանոն, ոչ միայն մեկ, այլև միաժամանակ մի քանի կամ շատ նպատակներ է հետապնդում: Բնական է, որ ծագում է նպատակների միջև հարաբերությունների վերաբերյալ հարցադրումը: Որպես նպատակների միջև հարաբերությունների տրամաբանական բացառում տարբերում են **նպատակների նմանություն ինչպես նաև անհամատեղելիություն** հասկացությունները:

Երկու նպատակներ լեզվական տարբեր ձևակերպումների պարագայում նման են, եթե նրանք իրենց իմաստով նույնն են: Այսպես, օրինակ, «լրիվ զբաղվածություն» ու «գործազրկությունից խուսափել» նպատակները իրենց իմաստով լիովին համընկնում են:

Նպատակների միջև հարաբերություններ ծագում են այն ժամանակ, երբ տնտեսաքաղաքական գործիքի կիրառումը, որպես կանոն, ազդում է մի քանի նպատակների վրա: Հազիվ թե գտնվի մի տնտեսաքաղաքական գործիք, որը ծառայի միայն մի կոնկրետ նպատակի հասնելու համար, և կողմնակի ազդեցություններ չունենա մյուս նպատակների վրա: Որպես **նպատակների միջև հարաբերություններ** դիտվում են.

- **փոխադարձաբար լրացումը (ներդաշնակությունը),**
- **չեզոքությունը (անտարբերությունը),**
- **բախումը (մրցակցությունը):**

Երկու նպատակներ ցուցաբերում են փոխադարձ լրացնելու կարողություն, երբ մի նպատակի իրականացումը միևնույն ժամանակ խթանում է մյուսին: Դրան հակառակ առաջ է գալիս նպատակների բախում, երբ մի նպատակի իրականացումը խոչընդոտում է մյուսին: Նպատակների չեզոքությունը ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ մի նպատակի իրականացումը մյուս նպատակի իրականացման վրա ոչ մի ազդեցություն չի ունենում:

Նույն ձևով լրիվ զբաղվածության ու տնտեսական աճի նպատակները հանդես են գալիս որպես փոխադարձաբար լրացնող: Օրինակ՝ եթե տնտեսական քաղաքականությանը հաջողվում է վերացնել գործազրկությունը, ապա դրանով միևնույն ժամանակ ավելացվում է արտադրված ապրանքների ծավալը: Սրան հակառակ՝ տնտեսական քաղաքականության մեջ հազվադեպ է հանդիպում նպատակների չեզոքությունը, քանի որ հազիվ թե լինի մի տնտեսաքաղաքական միջոց, որը միայն մի նպատակի հասնելու համար է և ոչ մի կողմնակի ազդեցություններ չունենա մյուս նպատակների վրա:

Ինչպես ցույց է տալիս փորձը, նպատակների միջև բախումները հետապնդվող նպատակների թվի հետ մեկտեղ աճում են: Նրանք կարող են հանդես գալ նաև նպատակների միևնույն փաթեթի ներսում, ինչը հատկապես պարզ է դառնում «կախարդական քառանկյան» մոտ:

Կառուցվածքային-քաղաքական նպատակները, որոնք ծառայում են կառուցվածքային իրավիճակի պահպանման կամ կառուցվածքային վերափոխման ձգձգմանը, կարող են հանգեցնել բախումների կոնյունկտուրային-քաղաքական աճի նպատակների հետ, քանի որ սովորաբար տնտեսական աճը՝ որպես նախապայման, ունի արտադրության գործոնների հարաբերականորեն բարձր կառուցվածքային ճկունություն ու շարժունակություն, և գլոբալ կառավարման աճը խթանող գործիքները շուկայից կախում չունեցող մասնաճյուղերի կառուցվածքների դեպքում կամ չեն գործում, կամ էլ վատ են գործում:

Տնտեսական քաղաքականության նպատակները կարելի է դասակարգել ըստ տարբեր չափանիշների: Այսպես, օրինակ, ըստ տնտեսաքաղաքական գործողությունների դաշտի **ձգվածության երկարության՝** կարելի է տարբերակել.

- **համատնտեսական նպատակներ,**
- **ճյուղային նպատակներ,**
- **ռեգիոնալ նպատակներ:**

Առաջին տեսակին, ամենից առաջ, պատկանում են կոնյունկտուրային քաղաքականության նպատակները, որոնք ուղղված են զբաղվածության բարձր ցուցանիշին, տնտեսության աճին, գների մակարդակի կայունությանը և արտաքին տնտեսական գործունեության հավասարակշռությանը: Համատնտեսական նպատակների բնույթ ունեն նաև կարգավորման քաղաքականության նպատակները, որոնք, օրինակ, ծառայում են ընդհանուր գործող մրցակցային կարգի ստեղծմանը:

Սեկտորային կամ ճյուղային նպատակները, որոնք միայն տնտեսության մի որոշակի ճյուղի համար են գործում, տեղ են գտնում, ամենից առաջ, սեկտորային կառուցվածքային քաղաքականության հատվածներում (օրինակ՝ ագրարային, ճանապարհատրանսպորտային, բարձրագույն տեխնոլոգիաների, տուրիզմի և այլն): Ռեգիոնալ նպատակները, որոնք գործում են միայն որոշակի ռեգիոնների համար (օրինակ՝ մոնոկառուցվածքով թույլ կառուցվածքային ռեգիոնները, բնակչության բարձր խտություն ունեցող և սահմանամերձ շրջաններ), հետապնդվում են գլխավորապես ռեգիոնալ կառուցվածքային քաղաքականության մեջ:

Ըստ թվային արժեքով արտահայտման ունակության կամ քանակական անորոշության՝ կարելի է տարբերակել.

- **քանակական նպատակներ,**
- **որակական նպատակներ:**

Այսպես օրինակ, նպատակների պրոյեկցիայի մեջ սահմանված են թվերով որոշված աճի նորմեր, զբաղվածության վիճակագրություններ և գնային մակարդակներ, որոնց պետք է ձգտել: Ռեգիոնալ կառուցվածքային քաղաքականության մեջ նույնպես կարող են, օրինակ, տնտեսությանը մոտ ենթակառուցվածքի ստեղծման համար նպատակները քանակական ձևով սահմանել (կոմունալ-կենցաղային հաստատությունների հնարավորությունները, կառուցվելիք տրանսպորտային ուղիների երկարությունը):

Որակական նպատակների դեպքում գերազանցապես ի հայտ են գալիս նպատակների այնպիսի սահմանումներ, որոնք ենթադրում են այս կամ այն կարգավորման քաղաքականության պայմանի բարելավումներ (օրինակ՝ մրցակցության կամ ազատ գործունեության համար): Նման ձևով տնտեսության մեջ պետական միջամտության ծավալների նվազեցման քաղաքականության շրջանակներում կարող է նպատակակետ դարձվել այն, որ որոշակի սեկտորում տնտեսական գործունեության ազատությունը բարելավվի, ընդ որում, դրա ծավալը քանակապես որոշել հնարավոր չէ: Նման որակական նպատակի հետ կապված է լոկ մի սահմանում՝ կարգային իմաստով (ավելի մեծ է կամ ավելի փոքր է քան նախկինում), մինչդեռ, օրինակ, ազատ գործունեության բարելավումը պետք է արտահայտվի ազատության դաշտի մեծացմամբ կամ գործունեության իրավիճակի բարելավմամբ:

Ըստ **որոշակիության աստիճանի** կարելի է տարբերակել.

- **հաստատագրված նպատակներ,**
- **փոփոխական նպատակներ:**

Հաստատագրված նպատակը ցույց է տալիս դրա ճշգրիտ չափը, որին պետք է հասնել: Այսպես, օրինակ, որպես նպատակ սահմանվում է տնտեսության մեջ հասնել 100 տոկոսանոց զբաղվածության (լրիվ զբաղվածության): Քանի որ լրիվ զբաղվածության կատարյալ վիճակին լիովին հասնելը գործնականում չի լինում, ապա շատ հաճախ նախապատվությունը տրվում է զբաղվածության փոփոխական նպատակին, ընդ որում, որպես նպատակ է հայտարարվում զբաղվածության հնարավորինս բարձր մի մակարդակ: Փոփոխական նպատակի դեպքում դրան հասնելու ձգտման աստիճանը անորոշ է, տրվում է միայն ցանկալի նպատակի վեկտորային ուղղությունը: Փոփոխական նպատակները, որոնց երկարաձգվելը սահմանված չէ, կարող են օգտվել «առավելագույն» կամ «փոքրագույն» նպատակի ուղղվածության բաղադրիչներից: Այսպես, օրինակ, որպես (փոփոխական) նպատակներ կարող են հանդիսանալ «բնակչության յուրաքանչյուր շնչի հաշվարկով առավելագույն իրական սոցիալական արտադրանքը» կամ «առևտրի հաշվեկշռի նվազագույնի հասցված դեֆիցիտը»:

Ըստ **ժամկետայնության** չափանիշի՝ կարելի է տարբերակել.

- **կարճաժամկետ նպատակներ (մոտ նպատակներ),**
- **միջին ժամկետի նպատակներ,**
- **երկարաժամկետ նպատակներ (հեռավոր նպատակներ):**

Կարգավորման քաղաքականության նպատակները սովորաբար լինում են երկարաժամկետ, քանի որ տնտեսական կարգավորման շրջանակները սկզբունքայնորեն նախատեսված են երկար ժամանակով և ուղղված են տնտեսական սուբյեկտների կողմնորոշմանը: Կառուցվածքային քաղաքականության նպատակները հաճախ նախատեսված են միջին ժամանակահատվածի համար (մոտ 3-ից 5 տարի), սակայն երբեմն կարող են երկարաձգվել և դրանով իսկ դառնալ երկարաժամկետ նպատակներ: Կոնյունկտուրային քաղաքականության նպատակները, որոնք վերաբերում են տվյալ պահին սրված տնտեսության վիճակին, սովորաբար կազմվում են որպես մոտակա նպատակներ:

Ըստ **պարզության** չափանիշի կարելի է տարբերակել.

- **բաց նպատակներ,**
- **թաքնված նպատակներ:**

Բաց նպատակները առաջադրվում են պարզ ոճով և փաստացի հետապնդվում քաղաքական, պետական ատյանների կողմից: Թաքնված նպատակներն այն նպատակներն են, որոնք կամ ոչ ճշգրիտ ձևակերպման պատճառով կարիք ունեն լուսաբանման (մեկնաբանման կարիք ունեցող նպատակներ) կամ էլ քաղաքական, պետական ատյանների կողմից լուրջ չեն ընկալվում և ընդամենը պետք է քողարկեն իրականում հետապնդվող նպատակները (քողարկված նպատակներ):

Կոնյունկտուրային քաղաքականության մեջ կախարդական քառանկյան նպատակները միանշանակ են ուրվագծված և նպատակների գլոբալ պրոյեկցիայում նույնիսկ քանակական ձևով են կազմված:

Կառուցվածքային քաղաքականության մեջ չափազանց դժվար է կամ միայն մասամբ է հնարավոր հեղհեղուկ նպատակային մեկնաբանություններից զտել հստակ նպատակները: Փորձը ցույց է տալիս, որ հատկապես ճյուղային կառուցվածքային քաղաքականության մեջ կան ավելի շատ թաքնված, քան բաց նպատակներ: Սա բխում է ամենից առաջ նրանից, որ հակառակ սկզբունքորեն հռչակված կառուցվածքային վերափոխումների և շարժողունակության քաղաքականությանը հաճախ գերակշռելիորեն հետապնդվում են կառուցվածքային պահպանողական նպատակներ: Ընդ որում, մշտապես ձգտվում է տնտեսական կառուցվածքային փոփոխությունը սուվերեն միջոցներով պահել, տնտեսության որոշակի ճյուղերին կամ խմբերին օգնելու՝ զբաղվածության և ապրանքների իրացման որոշակի մակարդակի, ինչպես նաև, որոշակի եկամտի հասնելու համար, ինչը նրանց կառուցվածքային քաղաքականության ազդեցությունից դուրս գտնվող շուկան այդ չափով և կազմով թույլ չէր տա: Բնականաբար ոչ արտոնյալ խմբերը, ոչ էլ կառուցվածքային տնտեսական վճիռ կայացնողները շահագրգռված չեն բացահայտել փաստացի հետապնդվող նպատակները, քանի որ այդ դեպքում արտոնյալ խմբերը կբախվեն արտոնությունների վերացման հավանական պահանջների հետ, իսկ իշխող օղակները ընտրողների ձայների հնարավոր կորստի հետ: Խմբերի փաստացի ձգտվող արտոնու-

թյունները հասարակության գիտակցության մեջ ներթափանցումը թույլ չտալու համար կառուցվածքային կոնսերվացման և սեկտորային վերաբաշխման քաղաքականության նպատակները քողարկվում են առաջ քաշված նպատակների սահմանումների հետևում, ընդ որում, որպես քողարկում՝ հաճախ ուռճացրած կերպով ծառայում է համընդհանուր բարօրությունը:

Ըստ տնտեսական քաղաքականության գործունեության ոլորտի՝ նպատակները կարելի է դասակարգել.

- **կարգավորման քաղաքականության,**
- **կառուցվածքային քաղաքականության,**
- **կոնյունկտուրային քաղաքականության**
- **վերաբաշխման քաղաքականություն:**

Կարգավորման քաղաքականության նպատակներն ուղղված են մի որոշակի տնտեսական կարգի ստեղծմանը, ինչպես նաև դրա զարգացմանը և կատարելագործմանը: Շուկայական տնտեսության տնտեսական կարգի հիմնարար բոլոր տարրերն էլ ուղղված են տնտեսական սուբյեկտների գործունեության համար մրցակցության շրջանակներում գործելու ազատ տարածքների ստեղծմանը: Իհարկե շուկայական տնտեսության կարգը նույնպես չի կարող անհատներին բոլոր բնագավառներում կատարյալ ազատություն ընձեռել (քանի որ այն ինքնակործանարար ազդեցություն կունենա), սակայն այն կարող է և պարտավոր է ստեղծել ազատ տնտեսական գործունեության համար ընդարձակ տարածքներ, որտեղ մրցակցությունը պետք է հնարավորինս պաշտպանվի՝ որպես իշխանությունը սահմանափակող արդյունավետ միջոց: Այդ պատճառով էլ կարգավորման քաղաքականության կարևորագույն խնդիրների թվին են պատկանում բոլոր այն նպատակները, որոնք ծառայում են արհեստներով զբաղվելու և մասնագիտություն ընտրելու ազատության հաստատմանն ու ընդլայնմանը, շուկա մուտք գործելու և մրցակցության ազատությանը (հատկապես գնի ազատ ձևավորման), արտադրության, իրացման և ներդրումների ազատությանը, տարածքների ազատ ձեռքբերմանը, ազատ արտաքին առևտրին և սպառման ազատությանը:

Կառուցվածքային քաքաղաքականության նպատակները կենտրոնացված են ինչպես աճի, այնպես էլ հավասարակշռման ասպեկտի շուրջ: Այսպես, օրինակ, մարզային կառուցվածքային քաղաքականությունը մի կողմից պետք է օգտագործի մարզերում թաքնված առկա զարգացման պոտենցիալը համատնտեսական աճի համար և մյուս կողմից պրոբլեմատիկ կառուցվածքային թույլ մարզերը պետք է հասցնի տնտեսական և համապատասխան շահութաբերության ստանդարտների: Ճյուղային կառուցվածքային քաղաքականության առջև նույնպես դրված են աճի և ադապտացիայի նպատակներ, որը ենթադրում է խթանել ինչպես աճի համար անհրաժեշտ կառուցվածքային վերափոխումը, այնպես էլ բարձրացնել տնտեսության ճյուղերի կառուցվածքային ադապտացիայի ունակությունը և կառուցվածքային վերափոխության ընթացքում աշխատակիցների մոտ երևան եկած սոցիալական հիմնախնդիրները:

Ճյուղային կառուցվածքային քաղաքականության պրակտիկայում ադապտացիայի նպատակը հաճախ վերափոխվում է գերակշռող հավասարակշռության նպատակի: Վերջինս ադապտացման ծանրությունները գլխավորապես պետության ուսերի վրա է դնում՝ շարունակական կառուցվածքային օգնությունների և տուժածներին փոխհատուցման վճարումների տեսքով: Որոշակի խմբերի շահերի հզոր ճնշման ներքո, որոնց անդամները կառուցվածքային վերափոխման պատճառով տուժել են փաստացի կամ միայն ենթադրաբար, տնտեսական քաղաքականությունը երբեմն հետամուտ է լինում նաև կառուցվածքային զուտ պահպանողական նպատակներին, որոնք դե ֆակտո հակադրվում են նախապես հայտարարված աճի նպատակներին:

Կոնյունկտուրային քաղաքականության նպատակները, որոնք պետք է կանխեն կոնյունկտուրային ծայրահեղ տատանումները (տնտեսական անկում, կոնյունկտուրային լարվածություններ), հաճախ հանդես են գալիս մի որոշակի խմբավորման մեջ: Այսպես, օրինակ, սովորաբար կոնյունկտուրային քաղաքականության մեջ պետք է միաժամանակ հետապնդվեն գների մակարդակի կայունության, լիակատար զբաղվածության, տնտեսության մշտական աճի և արտաքին տնտեսական գործունեության հավասարակշռության նպատակները: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հազիվ թե երբևէ հաջողվում է իրականացնել այդ չորս նպատակներն առանց բախումների և միաժամանակ: Վերը նշված նպատակների կոմբինացիան հաճախ բնորոշվում է որպես **«կախարդական»** նպատակների եռանկյուն, քառանկյուն կամ պոլիգոն: Վերջին տասնամյակներում դրանք հստակեցվել են և հիմնականում չորսն են.

- գների կայունություն,
- դինամիկ տնտեսական աճ,
- աշխատուժի բարձր զբաղվածություն,
- արտաքին տնտեսական հավասարակշռություն:

Գների մակարդակի կայունությունը չպետք է շփոթել գների կայունության հետ: Գների կայունությունն նշանակում է, որ գները կայուն են մնում, մինչդեռ գների մակարդակի կայունությունը նշանակում է, որ անփոփոխ է մնում ապրանքների գների միջին արժեքը: Շուկայական տնտեսության համակարգի բնորոշիչ հատկանիշն այն է, որ գները ճկուն են: Իդեալական է, եթե որոշ ապրանքների մոտ գների բարձրացումը փոխհատուցվում է այլ ապրանքների գների իջեցմամբ, այնպես, որ գների մակարդակը մնա կայուն: Վերջինս, որպես կանոն, անհատ տնային տնտեսությունների կենսամակարդակի համար չափվում է գնային ինդեքսի միջոցով, ընդ որում, որի հիմքում դրվում է որոշակի սպառողական զամբյուղ՝ չորս անձից բաղկացած տնային տնտեսության համար:

Լրիվ զբաղվածությունն լայն իմաստով նշանակում է արտադրության գործոնների լրիվ ծանրաբեռնվածություն: Նեղ իմաստով այն վերաբերում է միայն աշխատանքի գործոնին: «Կատարյալ» զբաղվածությունն տիրում է այն ժամանակ, երբ ամբողջ տնտեսության մեջ գործազուրկներ չկան: Հարաբերական զբաղվածության

ժամանակ գործազրկության ցուցանիշը գտնվում է որոշակի մինիմալ արժեքից ցածր (մոտ 1-ից 4%): Գործազրկության ցուցանիշի հաշվարկման համար գործազուրկների քանակը հարաբերակցման մեջ է դրվում աշխատողների թվի հետ: Որպես զբաղվածության աստիճանի չափանիշ՝ երբեմն օգտագործվում է նաև ազատ աշխատատեղերի հարաբերակցությունը աշխատանք փնտրողների թվի նկատմամբ: Այս դեպքում լրիվ զբաղվածություն է համարվում, երբ ազատ աշխատատեղերի թիվը համապատասխանում է աշխատանք փնտրողների թվին: Չափման այս մեթոդի խնդիրը կայանում է նրանում, որ ոչ բոլոր աշխատանք փնտրողներն ունեն տվյալ ազատ աշխատատեղին համապատասխան որակավորում:

Արտաքին տնտեսական հավասարակշռության նպատակը ոչ թե կապվում է արտաքին առևտրի հաշվեկշռի փոխհատուցման (ինչպես երբեմն ենթադրվում է), այլև վերաբերում է վճարման հաշվեկշռին, համապատասխանաբար դրանց ենթահաշվեկշիռներին (հատկապես ընթացիկ գործարքների): Հաճախ խոսվում է դրական կամ բացասական վճարման հաշվեկշռի, երբեմն նաև վճարման դեֆիցիտի կամ ավելցուկի մասին: Որպես արտաքին տնտեսական հավասարակշռության կարևորագույն ցուցիչ՝ հաճախ դիտվում է ընթացիկ գործարքների հաշվեկշիռը (վճարման ենթամասերից մեկը): Ընթացիկ գործարքների հաշվեկշիռը, ինչը գոյանում է առևտրի, ծառայությունների և ոչ առևտրային վճարումների և արտերկիր կամ հակառակը միակողմանի փոխանցումներից, կարող է լինել դրական կամ բացասական կամ էլ ունենալ զրոյական սալդո: Վերջինս նշանակում է հավասարակշռություն, քանի որ ներքին շուկան այնքան ընթացիկ վճարումներ է ստանում, ինչքան ինքն է կատարում դեպի արտասահման:

Կոնյունկտուրային քաղաքականության պրակտիկայում հատկապես հակասություն է առաջանում գների մակարդակի կայունության և լրիվ զբաղվածության նպատակների միջև՝ կապված այն բանի հետ, որ աշխատավարձերի (արտադրողականության բարձրացման հետ կապ չունեցող) աճը կարող է վտանգի ենթարկել գների մակարդակի կայունությունը: Եվ հակառակը. գների աճը սահմանափակող կտրուկ միջոցառումները կարող են հանգեցնել զբաղվածության կրճատմանն ու, վերջին հաշվով, տնտեսության անկմանը:

Ինչպես նկատում է Պետցոլը, տնտեսական քաղաքականության հիմնարար խնդիր է մնում տնտեսության կայունությունը, որի պայմաններում սկսվում է ընդհանուր զարգացումը: Ընդհանուր կայունության հասնելու համար գիտնականը առաջնային է համարում գների կայունությունն ու բարձր զբաղվածությունը, որոնք իրենց հերթին խթանում են արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը և ստեղծում դրական նախապայմաններ դինամիկ տնտեսական աճի համար:

Գրականության մեջ կարել է նկատել նաև ենթանպատակների համակարգ հասկացության: Ենթանպատակներ են հանդես գալիս պետության ակտիվ միջամտությամբ սոցիալական խնդիրների՝ ընդհանուր եկամուտների համահավասար վերաբաշխումը, սոցիալական անվտանգության բարձրացումը, նպատակադրումը և գործընթացների իրականացումը, արտադրության անհրաժեշտ գործոնների արդյունավետ կիրառումը, կոլեկտիվ պահանջմունքների բավարարումը, եկամուտների կայուն աճի ապահովումը և համահավասար վերաբաշխումը, տնտեսության նախապատվելի ճյուղի նկատմամբ հովանավորչությունը, սպառողական կառուցվածքի վերածնավորումը, ապահովության երաշխավորումը, դեմոգրաֆիկ բարեփոխումները, աշխատաժամանակի կրճատումը, արտաքին շուկաները կողմնորոշմամբ արտադրության զարգացումը, ներդրումների խրախուսումը և արտասահմանյան կապիտալի ներգրավումը հայրենական շուկա և այլն[1]:

Տնտեսական քաղաքականության նպատակների վերաբերյալ անհատի կարծիքը, գաղափարը, գնահատականի մոտեցումները թույլ են տալիս եզրակացնել, որ խնդիրը միայն տնտեսական քաղաքականության տեսությունների բացատրությամբ չի սահմանափակվում, այլ կարևորվում է նաև սուբյեկտը իր փորձով, աշխարհայացքով և համապատասխան լուծումների առաջարկությամբ: Նպատակները սեփական տեսակետից ներկայացումը կամ մեկնաբանումը էապես օգտակար է դրանց հստակեցման, վերահսկման գործընթացներում: Այն թույլատրում է նպատակների միջև հակասությունների ժամանակ գտնել դրանց համապատասխանությունը տնտեսական քաղաքականության տեսությունների հետ և իրականությունը փորձել բերել օպտիմալ նպատակների դաշտ:

Այսպիսով, կախված երկրում իրականացվող բարեփոխումների մեկնարկային, ընթացիկ ու հեռանկարային պայմաններից, ներքին և արտաքին քաղաքական խմորումներից ու միջավայրից, բնակչության ընկալումներից, պատրաստվածությունից և ձգտումներից, ազգային մենթալիտետից, մշակութային և հոգևոր արժեքներից հնարավոր է տարաբնույթ արդյունքների ստացումը՝ նույնիսկ նույնատիպ տնտեսական քաղաքականության կիրառման դեպքում:

Այսպիսին են տնտեսական քաղաքականության նպատակների վերաբերյալ արդի հայեցության մոտեցումները:

---

[1] Korner H. Theoretische Grundlagen der Wirtschaftspolitik. Koeln. 1977. Poser G. Wirtschaftspolitik. Stuttgart. 1992. Altmann J.Wirtschaftspolitik. Stuttgart. 1990.